

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊ. ՊՈՂԱՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՅԸ

19 Դեկտեմբեր 1997-ին մեզմե ատ լաւեա կը մեկնէր Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան: Իր մահով կ'ամհետամար Սրբոց Թակոբեանց Միաբանութեան անդամներէն, իայ մշակոյթի մոփրեալ սպասաւոր մը եւ անխոջ ձեռագրագետ մը:

Կիրակի, 21 Դեկտեմբեր 1997, Սրբոց Թակոբեանց Մայր Տաճարին մէջ, յընթացս մատուցուող Ս. Պատարագի, մշուեց Նորայր Արքեպ. Պողարեանի մահուան առաջին տարեդիցը: Մատուցուող Ս. Պատարագին մերկայ էր Պատրիարք Սրբազան Հայրը՝ Տ. Թորգոմ Արքեպ. Մամուկեան: Պատարագին էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան: Ժառանգաւորաց վարժարանի դպրաց դասը համաչափ եւ մերդաշնակ կերպով երգեց Կոմիտասեան Պատարագը՝ ղեկավարութեամբ դպրապետ Վարուժան Մարգարեանի:

Օրուայ քարոզիչն էր Տ. Ծմորիջ Ծ. Վրդ. Գասպարեան, որ խօսեցաւ քարոզի էականութեան եւ Աստուծոյ խօսքին վերամոտրոգիչ դերին մասին մարդուս կեանքին մէջ: Ամդրադարձաւ Նորայր Սրբազանի ստեղծագործ եւ արդիւնաշատ կեանքին եւ հոգեւոր ու կրթական գործունէութեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Նորայր Արքեպս. Պողարեանի հոգւոյն համար:

Պատարագէն վերջ Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Սրբազան Պատրիարք Հօր. Թափօրով ուղղուեցաւ դէպի Ս. Փրկիչ գերեզմանատուն: Այնտեղ Նորայր Սրբազանի շիրիմին վրայ մասնաւոր այգուցի արարողութիւն կատարուեցաւ:

Ապա Միաբանութիւնը ուղղուեցաւ Ժառանգաւորաց սրահ, ուր, համգուցեալի հոգւոյն համար աղօթքէն լետոյ, հոգեսուրճ հրամցուեցաւ: Ներկաներէն Պատրիարքարանի Դիւանատան երկարատեւ պաշտօնէալ Կարապետ Թակոբեան յիշեց Նորայր Սրբազանի տեսչութեան շրջանը Ելեւմտից Դիւանէն, մշեց ամոր մկարագրի գիծերէն՝ աշխատասիրութիւնը եւ ճշդապահութիւնը:

Ապա Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր. ուղղուեցաւ Վանքիս սեղանատունը, ուր հոգեճաշ տրուեցաւ համգուցեալի հոգւոյն համար: Վարդապետ Հայրեր անձնական յուշեր վերբերին, մշեցին ամոր վաստակին մեծութիւնը եւ մշակոյթի ժառանգութիւնը, որ ձգեց իր ետին:

Պատրիարք Սրբազան Հայրը իր եզրափակիչ խօսքով եւ աղօթքով օրհնեց յիշատակը Նորայր Սրբազանին:

ԱՆՈՒԾԱԻԱՆ Ծ. ՎՐԴ. ԶՂՋԱՆԵԱՆ

Տեղեկատու Դիւան. Երուսաղէմ